

«ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ Ի ՊԷՏՍ ՔԱՐՈԶՈՒԹԵԱՆՑ»*
(իմաստուն ասույթներ քարոզների համար)

361. Բարձր աշտարակ է պահոց պնդութիւն, բայց պիտոյ են նմա աղօթք և ողորմածութիւն, զի յորժամ զայս ունի՝ պտղալի է այգին:

362. Բարուոք է մարդկան յիշատակ մահու, զի հայելով յելս մարմնոյ, ամենևին մի ծառայեսցուք առ ժամանակեայ ցանկութեանց, որ ապականեն զոգիս, այլ հաստանիլ փութացուք յերկնից վայելչութեան:

363. Յանդուգն և անամօթն շտեմարան է ամենայն չարեաց:

364. Ոչ է պարտ ընդունայն զաստուածային բանն լեզուօք թաւա[լ]եցուցանել, այլ հաստատել փորուք և գործովք կնքել:

365. Առանց ուսման և դաստիարակի դժուարին է յաղթել բնական կրից և մանաւանդ ցանկականին:

366. Կաշառ կուրացուցիչ է մտաց և առիթ խոտորելոյ զդատաստանն Աստուծոյ:

367. Վայելուչ է խոնարհութեամբ լռելն, բայց կարի չար է ամբարտաւանութեամբ բարբառելն:

368. Գովելի է խոնարհութիւն և զարդ ամենայն առաքինութեանց, գլուխ է ամենայն բարի գործոց, և ամենայն առաքինութեան տեսակ ի նմանէ ունի սկիզբն:

369. Ճանապարհ առաքինութեան ի բազում մասունս զանազանի, իսկ կատարեալ առաքինիք և սուրբք այնոքիկ անուանին, որք բոլորովին զամենայնն կատարեցին և ոչ միով իւիք գթեցին:

370. Իմանալն զԱստուած գործ հաւատոյ է, սակայն ճառելն զնմանէ ժպրհութիւն է, զի անորակ է և անորպիսութիւն:

371. Այր հպարտասիրտ լաւ համարի զխօսս խոնարհութեան, քան զպատարագս և զ[ը]նծայս:

372. Աչք իմաստնոյն յամենայն ժամ վերամբարձ է, ուր Տէրն իւր է, այսինքն՝ Աստուած, անդ և հայեցուածն իւր է, ըստ որում միտք և գործք և մարմինն ի շարժմանն իւրում:

373. Որ զինքն մահու արժանի առնէ. նայ է պատճառ մահուան իւրոյ և ոչ՝ որ զվրէժ չարին պահանջէ, որպէս ոչ էր Փենէհէզ պատճառ մահուանն զԱմբրեայ, այլ՝ չարիքն իւր[12]:

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1990 թ. № № Ը—Թ-ից, 1991 թ. № № Ա—Բ—Գ-ից, Թ—Ժ-ից և 1993 թ. № № Դ—Ե—Զ-ից, Է—Ը-ից:

[12] Տե՛ս Թուոց ԻԵ, Դ Թագ. Թ 31—33:

361. Պահքի ամրությունը բարձր աշտարակ է, բայց նրան հարկավոր են աղոթքը և ողորմածությունը, քանզի այգին պտղատու է դառնում, երբ այս ամենը ունի:

362. Մարդկանց համար բարվոք է մահը հիշելը, քանզի նայելով մարմնի ելքին, ամենևին չենք ծառայի ժամանակավոր ցանկություններին, որ ապականում են հոգին, այլ կփութանք հասնելու երկնքի վայելչությանը:

363. Հանդուգն և անամոթը շտեմարանն է ամենայն չարյաց:

364. Պետք չէ Աստվածային խոսքը լեզվով ընդունայն հոլովել, այլ հաստատել հոգով և կնքել գործերով:

365. Առանց ուսման և դաստիարակի դժվար է հաղթել բնական կրքերին և մանավանդ ցանկականին:

366. Կաշառքը մտքի կուրացուցիչն է և առիթը Աստուծո դատաստանից խոտորվելու:

367. Խոնարհությամբ լռելը վայելուչ է, բայց չափազանց չար է ամբարտավանությամբ խոսելը:

368. Խոնարհությունը գովելի է և զարդը բոլոր առաքինությունների, գլուխն է բոլոր բարի գործերի, և ամեն տեսակ առաքինություն նրանից է սկիզբ առնում:

369. Առաքինության ճանապարհը բազում մասերի է բաժանվում, բայց կատարյալ առաքինիներ և սրբեր են կոչվում նրանք, ովքեր ամբողջությամբ բոլորը կատարեցին և ոչնչով չգայթեցին:

370. Աստծուն ճանաչելը հավատքի գործ է, սակայն նրա մասին ճառելը հանդգնություն է, որովհետև [Աստված] որակ և պարագա չէ:

371. Հպարտասիրտ այրը խոնարհության խոսքերը ավելի լավ է համարում, քան պատարագները և ընծաները:

372. Իմաստունի աչքը ամեն ժամ վերամբարձ է. որտեղ իր Տերն է՝ այսինքն Աստված, այնտեղ է և իր հայացքը, ըստ որի միտքը, գործերը և մարմինն իր շարժման մեջ:

373. Ով իրեն մահվան արժանի է դարձնում, նա է իր մահվան պատճառը և ոչ նա, ով չար վրեժն է պահանջում, ինչպես որ Զամբրիի մահվան պատճառը Փեհեզը չէր, այլ նրա՝ Զամբրիի չարիքը:

374. Աստված որակ և հանգամանք չէ, սակայն ասվում է լույս, որ և մարդ լինելով ու մեր բնությունը կատարյալ կերպով վերցնելով՝ իր բնությունից չհեռացավ, մեր զգայական անդամները Իր իմանալի Աստվածությանը միավորված մի եղավ, Իր բնությունը ամբողջական պահելով, նաև մերը վերցրեց:

375. Ինչպես որևէ մեկը բազում դույլերով ջուր կրի ծովից, չի կարող սպառել այն, սույնպես և բազում լեզուներ Աստուծո երախտիքների գովաբանությունը չեն կարող մեզ պատմել:

376. Ամեն առաքինության հունձքը բազում է, իսկ կիթը առավել ևս: Եվ ակնկալությունից չի հուսախաբվի նա, ով դառնում է որպես Աստուծո հոգու վարձկան, ինչպես որ հարկն է:

377. Ժամանակ կա, երբ լռությունը իմաստություն է համարվում, բայց դարձյալ՝ ժամանակ կա, որ լռելը սեփական անձին և մերձականերին վնաս է բերում:

378. Ովքեր մի անգամ իմաստության խոսքին տեղիչացին, բոլոր կենցաղական հոգսերին բարիով մնալ մաղթեցին:

379. Բարիքները երկուսն են. առաջինն է՝ չմեղանչելը, այլ լինել և

374. Անորակ և անորպիսութիւն է Աստուած, սակայն լոյս ասի, որ և լինելն մարդ և յառնուլն լիով զմերս՝ ոչ ի բաց եկաց յիւրմէն, զանդամս մեր զգալի յիւր իմանալի Աստուածութիւն միաւորեալ մի եղև զիւրն ամբողջ պահելով էառ և զմերս:

375. Զի ոչ եթէ ոք կրիցէ ջուր ի ծովէ բազում դուլիւք կարասցէ սպառել զնայ, սոյնպէս և ոչ բազում լեզուք զգովութիւնս երախտեացն Աստուծոյ, որ առ մեզ կարասցէ պատմել:

376. Ամենայն առաքինութեան հունձք բազում են և կոթք մեծապէս, և ոչ սխալի յակնկալութենէ, որ մտանէ Հոգոյն Աստուծոյ վարձկան որպէս և պարտն է:

377. Է ժամանակ, յորում լռութիւն յիմաստութիւն համարեալ է, և դարձեալ է ժամանակ, զի լռելն վնաս անձին և մերձակայիցն բերէ:

378. Որք միանգամ իմաստութեան բանից տենչացան ամենայն կենցաղական հոգոց բարեաւ մնալ ասացին:

379. Երկու են բարիք. առաջինն է՝ ոչ մեղանչելն, այլ կալ մնալ անարատ և անբիծ հոգով և մարմնով, իսկ երկրորդ՝ գործ է յետ մեղացն դարձեալ խոստովանել և ապաշխարել, զի թէ երկարի ապաշխարանքն և ի զմեղուցելոց կարգի առնէ զմարդն:

380. Եթէ արդարագործ չէս, արդարախօս լեր, և յերկարելն ի նոյնն արդարագործ ևս լինիս, ապա թէ գործք մարդոյն վատթար ոչ լինի, բայց լեզուն՝ սուտ, ոչ կարէ արդարանալ:

381. Աստուած զլերքն առաւել ատէ քան զյանցաւորն և զմեղաւորն:

382. Յորժամ դու ոչ թողուս զմեղս և Աստուած ոչ թողու զպատիժ մեղաց քոց, եթէ դու ոչ դառնաս առ Աստուած և Աստուած ոչ դառնայ առ քեզ դու հաշտես ընդ Աստուած, զի դու հեռացար ի նմանէ և կորուսէր զքեզ դու արդարացիր, զի դու մեղանչեցեր, որ ստեղծ զքեզ առանց քեզ ոչ արդարացուցանէ զքեզ առանց քեզ:

383. Յորժամ աստուածապաշտն ի տեղոջէ ելանէ, ընդ նմա ելանէ և շնորհքն Աստուծոյ:

384. Որ կատարիցէ զհրաման պատուիրանին Աստուծոյ, ամենայն աշխարհի հաւասարեալ է պատուական առաջի Տեառն Աստուծոյ:

385. Զիք ինչ հաճոյական նուէր կամ պատարագ Աստուծոյ, քան զճշմարտութիւն, զոր պահելի է ամենայն բանիւ զգեղեցիկն զայն պատուիրան:

386. Ասէ Աստուած. զ[հ]եկն և զպանդխտն մի նեղէք, զի բաւական նեղիչ է պանդխտութիւնն հեկին[13]:

387. Ի մասնէ քահանայիցն մի կերիցէ օտար, որ ոչ է գործակից գործոյն, մի եղիցի և սեղանոյ նոցայ սեղանակից:

388. Զարիք ի ծածուկ մնացեալք բազմապատկանաց և աճէ յանբաւս, իսկ յայտնեալն՝ խրատ առնու և բժշկի:

389. Մեղաւորն ի դառնալն իւրում պատարագ Տեառն է:

390. Քահանայի մեղքն մանաւանդ շարժէ զերկինս, զայրացուցեալ զհրեշտակս, որոց նման պարտ էր լինել:

391. Մարդն է բաղադրեալ ի հոգոյ և ի մարմնոյ, իսկ մարմինն է կազմեալ ի կաւոյ յերկրէ ըստ պատկերի անասնոց՝ մահկանացու և ապակամեալ ի կաւոյ յերկրէ

---

[13] Տե՛ս Ղևտ. ԺԹ. 33:

մնալ անարատ և անբիծ հոգով և մարմնով, իսկ երկրորդն է, մեղքերից հետո խոստովանել և ապաշխարել, քանզի եթե երկարի ապաշխարանքը, մարդուն կվերցնի մեղուցյալների կարգից:

380. Եթե արդարագործ չես, արդարախոս եղիր, և նույնի մեջ երկարաձգվելուց արդարագործ ևս կլինես, քանզի եթե մարդու գործերը վատթար չլինեն, բայց լեզուն սուտ լինի, չի կարող արդարանալ:

381. Աստված լրբին առավել է ատում, քան հանցավորին ու մեղավորին:

382. Երբ դու չթողնես մեղքը, Աստված ևս չի թողնի քո մեղքերի պատիժը, եթե դու չդառնաս առ Աստված, Աստված ևս չի դառնա դեպի քեզ. դու պիտի հաշտվես Աստուծո հետ, որովհետև դու հեռացար նրանից և կորստյան մատնեցիր քեզ. դու էլ արդարացիր, քանզի դու մեղանչեցիր. ով ստեղծեց քեզ առանց քեզ, չի արդարացնի քեզ առանց քեզ:

383. Երբ Աստվածապաշտը որևէ տեղից ելնում է, նրա հետ ելնում է և Աստուծո շնորհը:

384. Ով կատարի Աստուծո պատվիրանի հրամանը, ամբողջ աշխարհի չափ պատվական է Տեր Աստուծո առջև:

385. Աստուծո համար չկա ավելի հաճելի նվեր կամ պատարագ, քան ճշմարտությունը, որը պահելու արժանի է. ամեն ինչով գեղեցիկ այդ պատվիրանը:

386. Աստված ասում է. եկվորին ու պանդուխտին մի նեղեք, քանզի եկվորի պանդխտությունը բավականին նեղություն է:

387. Քահանայի բաժնից թող օտար մարդ չուտի, որ գործակից չէ նրա գործին, թող նրանց սեղանին սեղանակից ևս չլինի:

388. Ծածուկ մնացած չարիքները բազմապատկվում և անբավորեն աճում են, իսկ հայտնվածները՝ խրատվում և բժշկվում են:

389. Մեղավորը իր դարձով պատարագ է Տիրոջը:

390. Քահանայի մեղքը հատկապես շարժում է երկինքը, զայրացնելով հրեշտակներին, որոնց նման պետք է նա լիներ:

391. Մարդը բաղադրված է հոգուց և մարմնից. մարմինը կազմված է երկրի կավից ըստ կենդանիների պատկերի՝ մահկանացու և ապականելի, բայց հոգին ստեղծված ոչնչից ըստ Աստուծո պատկերի՝ անմահ և անապական:

392. Նրանք, որոնց հոգիները տկարացած են երկրավոր առաքինությունից, սաստիկ ահի մեջ է ընկած նրանց մարմնի բնությունը. ամեն հողմից շարժվում է, ամեն խոսքից խռովվում և ամեն դեպքից դողում, այդպիսին իր կյանքում երազներով է տարված, իսկ մահանալիս անդառնալի կորստյան է մատնվում:

393. Կույրը զրկվում է արեգակի ճառագայթներից, իսկ տգիտությունը զրկում է կատարյալ կյանքից:

394. Լավ է կույր աչքով, քան կույր մտքով:

395. Ինչպես մեծ է հոգին, քան մարմինը, այնպես մեծ է մտքի տեսողությունը, քան մարմինը:

396. Եթե մեկը աշխարհիկ հարստությամբ առաջացած լինի, սակայն մտքով աղքատ լինի, ողորմելի է շատերից: Ինչպես և տեսնում ենք ոչ միայն հասարակ մարդկանց մեջ, այլև որ մեծ է, քան բոլորը: Եթե թագավորը իմաստություն իրեն աթոռակից չունի, չի կարող իր վիճակի մեջ վայելուչ լինել:

նելի, այլ հոգին է ստեղծեալ յոչնչէ ըստ պատկերի Աստուծոյ՝ անմահ և անապական:

392. Որոց ոգիքն թուլացեալ են յերկնաւոր առաքինութենէն յոյժ ընդ ահիւ անկեալ է բնութիւն մարմնոյ յամենայն հողմոց շարժի և յամենայն բանէ խռովի, յամենայն իրաց դողայ, երազագետ է այնպիսին ի կեանս իւրում և յանգիստ կորուստն յուղարկի ի մահուանն իւրում:

393. Կոյր զրկի ի ճառագայթից արեգականն և [տ]գիտութիւնն զրկէ ի կատարեալ կենաց:

394. Լաւ է կոյր աչօք քան կոյր մտօք:

395. Որպէս մեծ է հոգի քան զմարմինն, սոյնպէս մեծ է տեսաւորութիւն մտաց քան զմարմնոյ:

396. Եթէ ոք առաւելեալ իցէ աշխարհական մեծութեամբ և մտօք աղքատագոյն ողորմելի է քան զամենայն: Որպէս և տեսանեմք իսկ՝ ոչ միայն ի չափաւոր մարդիկք, այլև որ մեծն է քան զամենայն: Թագաւոր եթէ ոչ ունի զիմաստութիւն աթոռակից իւր ոչ կարէ ի վիճակին իւրում վայելուչ գոլ:

397. Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ անմահութիւն է[14]:

398. Մեծն է ամէն Աստուծոյ քան զամենայն մեծութիւն երկրաւոր, և այնպէս աներկիւղս առնէ զմարդն իբրև զանմարմին զօրս հրեշտակաց, որպէս և անդատին իսկ զբանն է տեսանել, որ սիրովն Աստուծոյ վառեալք ոչ խնայեցին զանձինս կամ ի մահ անձանց կամ ի յափշտակութիւն ընչից՝ այլ յոչ ինչ համարեցան զամենայն:

399. Գլուխ ամենայն առաքինութեան համբերութիւն է և իմաստութիւն երկնաւոր կատարեալ աստուածապաշտութիւն է և զայս ոչ ոք կարէ գըտանել առանց չարչարանաց:

400. Որք միանգամ աշակերտեալ են ճշմարտութեան, ոչ երբէք փոփոխին ի նմանէ, այլ, որ են, նոյն կան:

401. Կորուսեալ լինի առաքինութիւնն ի փափկակեցութենէ և ի շատախօսութենէ:

402. Յիմար է ճանապարհորդն, որ ընդ երթալն, հատելով ի ծաղկերանգ մարգս, մոռանայցէ զօթևանն, ուր դիտէրն, այսինքն է՝ ճանապարհ կենցաղոյս:

403. Երեք են, որ պատրեն զմարդն, այսինքն՝ Սատանայ, Աշխարհս և Մարմինս մեր. Աշխարհս աղաղակէ՝ Ես պակասեցայց, Սատանայ՝ Ես խաբեցից, Մարմինն՝ Ես ապականեցից, և Քրիստոս՝ Ես նորոգեցից: Ընտրեայ, թէ ում կամիս հետևիլ, ո՞վ մարդ:

404. Եթէ ոչ էր մեղանչեալ մարդն՝ որպէս յարի մատն ընդ մատին առանց ջեռական ցանկութեան և ամպոյ, այսպէս արք և կանայք միաւորէին առանց գարշ ցանկութեան, և կանայք առանց երկանց և ցաւոց ծնանէին:

405. Ամենայն մոլութիւն ծերանայ ընդ ծերոյն, բայց ագահութիւնն մանկանայ:

406. **Սրբոյն Եւագրեայ ասացեալ.** Արքայութիւն Աստուծոյ է գիտութիւն Սրբոյ Երրորդութեանն <....> (թ. 32բ—43ա):

---

[14] (392—397) Տե՛ս «Եղիշէի վասն Վարդանայ և Հայոց պատերազմին», Երևան, 1957, էջ 14:

397. Զգիտակցված մահը մահ է, գիտակցված մահը՝ անմահություն է:

398. Աստուծո սերը ավելի մեծ է, քան ամեն երկրավոր մեծություն և այդպես աներկյուղ է դարձնում մարդուն, ինչպես հրեշտակների անմարմին զորքերը, որպես և ըստ այդմ սկզբից ևեթ երևում է, որ Աստուծո սիրով վառվածները չխնայեցին իրենց անձերը և՛ իրենց մահվան, և՛ ունեցվածքի հափշտակության ժամանակ, այլ ամեն ինչը ոչինչ համարեցին:

399. Բոլոր առաքինությունների գլուխը համբերությունն է, իսկ երկնավոր իմաստությունը կատարյալ Աստվածապաշտություն է և սա ոչ ոք չի կարող գտնել առանց չարչարանքի:

400. Ովքեր մեկ անգամ աշակերտել են ճշմարտությանը, երբեք չեն փոփոխվի նրանից, այլ ինչ որ են, նույնը կմնան:

401. Առաքինությունը կորչում է փափկակեցությունից և շատախոսությունից:

402. Հիմար է այն ճանապարհորդը, որ երթալիս հատելով ծաղկերանգ մարգերը մոռանում է օթևանը, որին հետևում էր, այսինքն՝ կյանքի ճանապարհը:

403. Երեքն են, որ խաբում են մարդուն, այսինքն՝ Սատանան, այս աշխարհը և մեր մարմինը. Աշխարհն աղաղակում է՝ ես պակասելու եմ, Սատանան՝ ես խաբելու եմ, Մարմինը՝ ես ապակնելու եմ, իսկ Քրիստոս՝ ես նորոգելու եմ: Ո՞վ մարդ, ընտրիր, թե ում ես կամենում հետևել:

404. Եթե մարդը մեղանչած չլիներ, ինչպես որ մատն է մատին դիպչում առանց ջեռուցվող ցանկության և գոլորշու, այսպես և այր և կանայք կմիավորվեին առանց գարշ ցանկության, իսկ կանայք կծնեն դաբերեին առանց ցավերի և երկունքի:

405. Ամեն մոլություն ծերության հետ ծերանում է, բայց ագահությունը՝ մանկանում:

406. Սուրբ Եվագրի կողմից ասված. Աստուծո արքայությունը Սուրբ Երրորդության ճանաչողությունն է:

407. Արիստոտել. Գովելի են գեղեցիկները և պարսավելի են գարշելիները, քանզի բարիներից առաջանում են առաքինությունները, իսկ գարշելիներից՝ չարությունները:

408. Ինչպես առաքինի մարդը բոլոր կենդանիներից լավագույնն է, նույնպես և առաքինություններից հեռացածը ամենքից չարագույնն է:

409. Հիմար է (նա), ով տեսնում է ուրիշների պարտականությունները, բայց իրենը մոռանում է:

410. Հարկավոր է արթնանալ գիշերը, քանզի օգուտ է իմաստության և ուղղամտության համար:

411. Վավաշոտության ժամանակ կուրանում է բանականությունը,

<412.> որին մերձ լինելը բարի է, իսկ հեռու լինելը՝ չար:

413. Բարին այն իրողությունն է, որ ամենքը ձգտում են նրան:

414. Մարմինը որքան պատվական է և գեղեցիկ, հարկավոր է ամենաբարձր տեղում պահել:

415. Ով տգեղ է կերպարանքով, դժվարությամբ կարող է գովելի բարք ունենալ:

416. Բոլոր սարսափների կատարումը մահն է, որն անարկու է, քան բոլոր սարսափները:

417. Պետք է իմաստությանը հոգ տանես և ոչ ունեցվածքին, քանզի

407. **Արիստոտել.** Գովելի են գեղեցիկ և պարսաւելի են գարշելիքն, քանզի բարեացն յառաջեալ լինին առաքինութիւնք և գարշելեացն՝ չարութիւնք:

408. Որպէս լաւագոյն քան զամենայն կենդանիս է առաքինի մարդն, նոյնպէս որոշեալն յառաքինութեանց է չարագոյն յամենեցունց:

409. Ցիմար է, որ տեսանէ զպարտս այլոց և զիւրն մոռանայ:

410. Պարտ է յառնել ի գիշերի, քանզի է օգուտ առ յիմաստութիւն և առ յողջախոհութիւն:

411. Ի գործս վաւաշոտութեան կուրանայ բանականութիւնն,

<412> որոյ մերձ լինելն բարի է, ի բացեա լինիլն չար է:

413. Բարին այն իրքն է, որ ամենեքիքն ցա[ն]կան նմա:

414. Մարմինն որչափ պատուական է և գեղեցիկ պարտ է ի բարձրագոյն տեղիս դնել:

415. Որ տգեղ է կերպարանօք դժուարաւ կարէ ունել գովելի բարս:

416. Կատարած ամենայն անարկութեանց մահ է, և անարկու է քան զամենայն անարկութիւնս:

417. Իմաստից հոգ տարցիս, քան թէ ընչից, քանզի նովաւ ստանին ինչք և ընչիւք ոչ ստանի իմաստութիւն:

418. Իմաստասէր ոչ զյոգնագէտս կոչեմ և ոչ որ բազում բան ունի ի բանս, այլ որ ուղիղ վարս ստացեալ է յանձին:

419. **Պղատոն.** Ոչ է պարտ ումէք զինքն կամ զայլս ի բաց տգեղ ի մարմնոյն ի կենաց աստի մինչև նա, որ կապեացն, վերստին լուծցէ:

420. Քրտամբք և աշխատութեամբ բուսանի առաքինութիւն:

421. Ամենայն գիտութիւն որոշեալ յառաքինութեանց, խաբէութիւն է և ոչ իմաստութիւն:

422. Անձամբ անձին յաղթել քան զամենայն յաղթութիւնս առաջին է և քաջ:

423. **Փիլիսոփայից ասացեալ.** Հաւատարիմ բարեկամս դէղ է կենաց մարդկան:

424. Անխրատից պատահէ մահ:

425. Ցիմարագոյն է, որ ընդ վեհագունին քան զինքն բերէ հակառակութեան վեճ:

426. Իմաստունն խորհրդով բազմաձեռն զօրութեան յաղթէ, իսկ անուսումնութիւն անհնարին չար է:

427. Ամենայն ապականութիւն բնականապէս ի ներհակէն է որպէս ապականութիւն է ջերմութեան ցրտութիւնն:

428. Չարութիւն ոչ արտաքս հանէ զչարութիւն, այլ առաւել աճեցուցանէ, քանզի պարտ է ներհակաւն հանել զներհակն:

429. Երեք բորբոքումն գոյ յերկինս, որ մի են և համագոյ և յերից միութենէն, մինն՝ ի մարմնի տեսանի և յերից երևութիցն և յանեղական անձնաւորութեանցն ոչ պակասի:

430. Հարց. Յետ քանի աւուր կնոջ առ այր մերձաւորութեան արժան է մտանել ի տէրունիսն: Պատասխանի. Ցիրմէն՝ նոյն օր, յօտարին՝ և ոչ բնաւ երբէք:

431. Զինչ երանագոյն և բարեգոյն ի կեանս յայս եթէ ոչ միտք բարեգիտակ ուղղութեան, և ընդդէմ այսմ ոչ ինչ չարագոյն և թշուառագոյն քան զմիտս որոյ խիղճ մտացն գիտակ է մոլութեան:

նրանով ունեցվածք ստացվում է, բայց ունեցվածքով իմաստություն չի ստացվում:

418. Իմաստասեր անվանում են ոչ շատ բան իմացողին և ոչ ճարտարախոսին, այլ որ ուղիղ վարքի տեր է:

420. Առաքինությունը աճում է քրտինքով և աշխատանքով:

421. Առաքինություններից հեռացած ամեն գիտություն խաբեություն է և ոչ իմաստություն:

422. Անձամբ սեփական անձին հաղթելը բոլոր հաղթանակներից առաջինն է ու քաջը:

423. **Փիլիսոփաների կողմից ասված.** Հավատարիմ բարեկամը մարդկանց կյանքի դեղն է:

424. Անխրատներին մահն է հանդիպում:

425. Հիմարագույն է նա, ով իրենից ավելի բարձրի հետ վիճաբանություն է առաջ քաշում:

426. Խորհրդով իմաստունը հաղթում է բազմաձեռն զորությանը, իսկ անուսումնությունը աննկարագրելի չարիք է:

427. Ամեն ապականություն բնականորեն ներհակից է. ինչպես որ ապականություն է ջերմության սառնությունը:

428. Չարությունը չարությանը չի արտաքսում, այլ առավել է աճեցնում, քանզի պետք է ներհակը ներհակով հանել:

429. Երկնքում երեք ջահեր գոյություն ունեն, որ մի են և համագո և երեքի միությունից. մեկը՝ մարմնի մեջ է երևում, բայց երեքի կերպարանքից և անեղական անձնավորություններից չի պակասում:

430. Հարց. Կնոջ և տղամարդու մերձավորությունից քանի օր հետո է արժանի մտնել Տերունականի մեջ: Պատասխան. Յուրայինին՝ նույն օրը, օտարին՝ բնավ երբեք:

431. Այս կյանքում ինչն է ավելի երանելի և բարի, եթե ոչ բարու ուղղությանը ծանոթ միտքը, բայց սրա դիմաց ավելի թշվառ և չար ոչինչ չկա, քան այն միտքը, որի խղճմտանքը ծանոթ է մոլորությանը:

432. Ում վախճանը բարի է, ինքը ևս բարի է, ում վախճանը չար է, ինքը ևս չար է, ապա ուրեմն ում վախճանը արժեք չունի, ինքը ևս արժեք չունի:

433. Խռովված նավը նավահանգիստ է շտապում, իսկ ժուժկալ անձը հանդարտություն է ցանկանում:

434. Առանց կրթության մարդիկ դժվարությամբ են կարող բարու ուղղություն ստանալ:

435. Իշխելիս հեզ եղիր, իսկ իշխանության տակ՝ երկայնամիտ:

436. Եթե իշխանության տակ մնալ չսովորեցիր, մի համարձակվիր իշխան լինել:

437. Իշխանի հետ պետք է վարվել ինչպես կրակի հետ, ամբողջությամբ մի հպվիր, որպեսզի չայրի, և առավել մի հեռացիր, որպեսզի չպաղի:

438. Իշխանը նա է, որ ինքն իրեն է դատում:

439. Մեծ չարիք է, եթե վատթարները լավագույններին իշխում են, սակայն այլ մեծագույն և սաստիկ չարիք է, որ անմիտները իմաստունների վրա են կարգվում:

440. Եթե կամենում ես տան մեջ բարվոք բնակվել, ընտրում ես լավը

432. Որոյ վախճանն բարի է և ինքն բարի, որոյ վախճանն չար է և ինքն չար, ապա ուրեմն որոյ վախճանն ոչ ինչ և ինքն ոչ ինչ:

433. Ի նաւահանգիստ փութայ նաւ խոովեալ, և անձն ժուժկալ խնդրէ զհանդարտութիւն:

434. Առանց վարժման դժուարաւ կարեն մարդիկք բարուց ուղղութիւն ստանալ:

435. Իշխելն հեզ լեր և ընդ իշխանութեամբն՝ երկայնամիտ:

436. Եթէ ընդ իշխանութեամբ կեալ ոչ ուսար, իշխան լինել մի համարձակիր:

437. Ընդ իշխանի պարտ է կեալ իբրև ընդ կրակի՝ մի ամենևին հուպ, զի մի այրեսցէ, և մի առաւել հեռի, զի մի ցրտասցի:

438. Իշխանն այն է, որ իշխանն զինքն զդատէ:

439. Չար մեծ է, թէ վատթարքն լաւագոյնիցն իշխեն, և այլ մեծագոյն և սաստիկ չար, որ զանմիտս ի վերայ իմաստնոց կարգին:

440. Եթէ կամիս բարուք ի տան բնակել, ընտրեա զլաւն ի վատթարէն և զվաստակաւորն յանջանէն, զի մի կորուստ տանն ի նըմանէ եղիցի:

441. Մի զապարանս քո շինեսցես կրաւ և մի գրկունս քո՝ բարձրաբերձս, այլ զբնակիչսն բարեգործութեամբ և սիրով հաստատեսցես, զի ոչ ոք ի վնասողաց մտցէ անդ:

442. Արմատ խրատուն դառն է և զպտուղ նորա՝ քաղցր:

443. Պարտ է յարգել և մեծարել զվարդապետս, քան զծնօղս, զի նոքա կելոյ եղեն պատճառ, իսկ սոքա բարիոք կելոյ:

444. Հիւանդաց բեռինս բառնալ և անմտաց մեծութիւն միապէս է:

445. Ինչ է պարտ որք բարուոք միտս ունին խօսել ընդ անմիտս և որք հրահանգեալքն են խօսել ընդ անհրահանգս, որպէս ոչ է արժան զգաստից խօսել ընդ արբեցեալսն:

446. Որ կամի ոչ տրտմիլ, մի տրտմեցուցէ զոք:

447. Զվիշտ բարեկամին անձին քում համարեա և ի քաջ շնորհութեան քում օգնեա նմա:

448. Սիրելեաց յուրախութիւն կոչելով պարտ է գնալ, իսկ վիշտս և ի փորձութիւնս՝ անկոչ:

449. Որք ոչ կարեն օգնել բարեկամաց զանկարութիւն նշանակէ, իսկ որք կարեն և ոչ կամին զչարութիւն յայտնէ:

450. Որք ի ժամանակի ուրախութեան զբարեկամս գգուեն և ի նեղութեան հեռանան, նոքա ժամանակին իցեն սիրելիք և ոչ բարեկամին:

451. Յանզգամաց մի ստանար բարեկամս, զի մի և դու ան[զ]գամ կոչեցիս:

452. Փախչել պարտ է ի չարեաց սիրելութեանց և ի բարեաց թշնամութեանց:

453. Զխորհուրդ, զոր ի ժամանակին սիրելութեան լուար, ի լուծման սիրոյն, մի յանդիմանեսցես, քանզի վնասես անդրէն ոչ զսիրելին, այլ զսէրն:

454. Պարտ է, որք խորհին իշխանութիւն անել ի վերայ այլոց, նախ անձանց իւրեանց իշխեսցեն:

455. Լաւագոյն է ընդ իշխանութեամբ անմտաց լինել, քան թէ իշխել այնպիսեացն:

456. Ո՞, ուժ առանց խելաց զունօղս իւր վնասէ:

վատթարից և վաստակով ձեռք բերվածը հեշտությամբ ձեռք բերվածից, որպեսզի տան կորուստը նրանից չլինի:

441. Քո ապարանքը կիրով և ընդունարանը բարձրաբերձ մի շինիր, այլ բնակիչներին բարեգործությամբ և սիրով պիտի հաստատես, որպեսզի թշնամիներից ոչ ոք չմտնի այնտեղ:

442. Խրատի արմատը դառն է, իսկ նրա պտուղը՝ քաղցր:

443. Պետք է հարգել և մեծարել ուսուցիչներին, ավելի քան ծնողներին, քանզի նրանք կյանքի պատճառ եղան, իսկ սրանք՝ բարվոք կյանքի:

444. Հիվանդների բեռներ բարձրացնելը և անմիտների մեծամտությունը միևնույն բանն է:

445. Ինչ կարիք կա, որ ովքեր բարվոք միտք ունեն, զրուցեն անմիտների հետ, կամ ովքեր կրթվածներ են, զրուցեն անկիրթների հետ, ինչպես որ սթափներին արժանի չէ խոսել հարբածների հետ:

446. Եթե որևէ մեկը չի կամենում տրտմել, թող ոչ մեկին չտրտմեցնի:

447. Բարեկամիդ վիշտը քո սեփականը համարիր և քո բարի շնորհով օգնիր նրան:

448. Սիրելիների ուրախության ժամանակ հարկավոր է հրավերով գընալ, իսկ վշտերի և փորձությունների ժամանակ՝ անհրավեր:

449. Ովքեր չեն կարող օգնել բարեկամներին, անկարողություն է նշանակում, իսկ ովքեր կարող են և չեն կամենում, չարություն են դրսևորում:

450. Ովքեր ուրախության ժամանակ գգվում են բարեկամին, սակայն նեղության ժամանակ հեռանում, նրանք ժամանակը սիրողներ են, բայց ոչ բարեկամին:

451. Անզգամներին բարեկամ մի ունեցիր, որպեսզի դու ևս անզգամ չկոչվես:

452. Պետք է փախչել չարի սիրելուց և բարու թշնամությունից:

453. Խորհուրդը, որ սիրելու ժամանակ լսեցիր, սիրո լուծվելուց մի հանդիմանիր, քանզի դրանով վնասում ես ոչ թե սիրելիին, այլ սերը:

454. Ովքեր մտածում են իշխել ուրիշների վրա, պետք է նախ իրենց անձերին իշխեն:

455. Ավելի լավ է անմիտների իշխանության տակ լինել, քան իշխել այդպիսիներին:

456. Ո՞վ, ուժը առանց խելքի, իրեն ունեցողներին վնասում է:

ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՑԱՆԿ

Ա

Աբեղա—281
ագահություն—77, 155, 208, 249, 279, 403
աղօթք, խոկում, հսկում—55, 69, 71, 72, 93, 127, 128, 142, 173, 175, 241, 302, 306, 312, 313, 314, 315, 318, 410
անարժան զոհ—81
անարժանություն—443
անխրատություն—199
անհոգություն—119
անձնիշխանություն—352
անճնուրացություն—150, 226, 278, 422
անցյալ, ներկա, ապագա—167
անօգուտ խորհուրդներ—193
անօրինություն—152
ամբարշտություն—62
ամբարտավանություն—327, 363, 381
ամոթխածություն—266, 285
ամուսնություն—89
ապաշխարություն—79, 171, 234, 308, 321, 325
աշխարհ (բացասական, դրական)—5, 21, 25, 26, 27, 41, 44, 67, 87, 141, 104, 286, 402, 403
աչքով պղծվել—157, 172
ապագան և հավիտենականն է կարեվոր—113, 126, 156, 233
առավել ապահով է լսելը քան խոսելը—85, հմմտ. 153, 154
առաքինություն—82, 134, 157, 180, 214, 305, 309, 376, 401, 407, 408, 420, 421
Աստված—245, 246, 247, 248, 270, 286, 287, 348, 375
Աստված՝ արարիչ—230
Աստծո գործը—176
Աստված լույս է—374
Աստված ներկա է նեղության մեջ—140
Աստծո խաչվելը—12, 14, 291, 324
Աստծո հիշել—227
Աստծո ճանաչելը—58, 148
Աստծո միանալ—186
Աստծո պարտապան—266, 409
Աստծո սերն առ մարդիկ—64, 237, 238
Աստվածածին—13
ատելություն—271, 272, 273
արդարացում—65
արդարներ, արքեր—296, 338, 354
արդարություն—117, 200, 380
արհամարհանք—235

Բ

Բամբասանք—35, 275
Բանն մարմնացավ—337, 353, 374
բարիք—379, 412, 413
բարկության անհրաժեշտությունը—1, 2, հմմտ. 178
բարկության մերժելիությունը—11, 37, 38, 106, 254, 329
բարություն—63, 78, 181, 347, 355
բնակություն—440, 441
բռնություն—218

Գ

գեղեցիկ, տգեղ—407, 415
գործել արքությամբ—114

Դ

դժոխք—200, 307

Ե

երանություն—207
երկյուղածություն, աստվածպաշտություն—95, 144, 183, 298, 383

Զ

զղջում, արտասուք—97, 116, 236

Ը

ընդդիմանալ սեփական կամքին—118
ընթերցում, սերտողություն, ուսուցում—55, 175, 187, 188, 204, 205, 241, 242, 323, 365
ընկերություն, բարեկամություն—192, 450, 451, 452

Թ

թշնամություն—6

Ժ

ժառանգություն—333

Ի

իմաստություն, իմաստուն—258, 331, 372, 378, 417, 418
իշխան, իշխանություն—435, 436, 437, 438, 439, 454, 455
իրագործելը, կատարելը՝ առաքինություն—24

Լ

լավ է լռել քան խոսել—367
լեզվակռիվ—32
լեզուն սանձել—198, 359
լռել, խոսել—377, 401

Խ

Խաչ—138, 217
խիղճ—344
խոհեմություն—195, 222, 223
խոնարհություն, հեզություն—34, 73, 76, 91, 97, 102, 105, 163, 170, 177, հմմտ. 182, 187, 281, 228, 265, 276, 299, 316, 340, 368, 435
խոսք և գործ—115, 326, 336, 364
խոստովանություն—30, 203
խրատ—103, 304, 308, 309, 357, 424, 442, 453
խուսափել հաճույքներից ի սեր Քրիստոսի—66, 92, 118, 124, 125

Ծ

ծուլություն—135, 136, 168, 197, 201

Կ

կատարելություն—111, 112
կամք—122, 166, 182
կաշառք—366
կիրակի—129
կրթություն—243
կուսություն—59, 61, 89, հմմտ. 149, 171, 224, 225, 360

Հ

հակադրություն—426
համակամություն—48
համբերություն, մեծահոգություն—4, 22, 120, 121, 123, 133, 196, 399
հաղորդություն—18, 51, 212
հանդերձյալ կյանք—305
հանդարտություն—433
հանդիմանություն—330
հավատարմություն—423
հավատք—54, 56, 96, 219, 288, 289, 294, 310, 370
հիմարություն—33, 57, 160, 220, 223, 258, 331, 425
հպարտություն—28, 31, 37, 97, 99, 100, 102, 255, 259, 260, 261, 267, 276, 299, 371, 444
հոգու աչք—322
հոգի և մարմին—287, 365, 391, 403, 414
հոգին է կարևոր—42
հոգևորականը պետք է ավելի առաքինի լինի քան աշխարհականը—94
հոգևոր գեղեցկություն—20
հույս, հուսահատություն,—335

Ձ

ձգտում առ երկնավորը—2ա, 67, 68, 76, 80, 87, 107, 216, 362

Ճ

ճիշտ ապրել—52, 232, 256, 268, 418
ճշմարտություն—194, 385, 400

Մ

մահ, դատաստան, հաշվետվություն—43, 44, 145, 147, 165, 184, 202, 301, 362, 373, 397, 416, 432
մարմին—251, 252, 253, 262
մեղավորներ, անիրավներ—296, 297, 346
մեղավորի դարձը—389
մեղմ հրաման—162
մեղք—7, 39, 50, 106, 109, 110, 119, 147, 151, 59, 180, 236, 250, 269, 382, 404
մեռնել երկրի և ապրել երկնքի համար—29
մերձավորություն—430
միիշխանություն—231
միտք—119, 173, 209, 292, 303, 341, 394, 395, 396, 431

միութարություն—356
մտածել հետո խոսել—53

Ն

նախանձ—34, 37, 91, 169, 343
նախասահմանվածություն—358
նեղություն—309

Ո

ոխակալություն—32
ողորմածություն—210, 351
որկրամոլություն—19, 23, 84, 86, 88, 108, 131, 137, 215, 277

Չ

չարություն, չարիք—63, 349, 355, 388, 412, 428, 439
չհանդիմանել քահանային—293
չողբալ հանգուցյալի վրա—10, 300

Պ

պահք—361
պանդխտություն—386
պարգևողին Աստված պարգևում է—49
պճնամոլություն—149, 263

Ս

սակավապետություն—131, 139
սատանա—130, 307, 311, 334, 339, 403
սեր—451
սեր առ աշխարհ—141
սեր առ Աստված—26, 36, 41, 132, 133, 141, 139, 191, 244, 284, 290, 295, 319, 320, 328, 332, 342, 350, 384, 398
սեր առ մարդ—319
սիրտը և խոսքը—46, 75, 127, 128, 174
սպանել, ինքնասպան լինել—419
Սուրբ Երրորդություն—429

Վ

վախկոտություն—392
վավաշոտություն—411
վարձ-դատաստան, փոխհատուցում—40, 188
վշտակցություն, խնդակցություն—447, 448

Տ

տգիտություն—179, 393, 426
տխրություն—446
տրտմություն—206
տրտունջ—280, 282

ՈՒ

ուժ (ֆիզիկական)—456

Փ

փառաբանություն—211
փառամոլություն--158, 161, 257
փափկակեցություն—401
փրկություն—98

Ք

քահանայություն—3, 342, 387, 390
քրիստոնեություն—45
Քրիստոս այլ տեղ չէ, բայց միայն Խաչի վրա—138
Քրիստոս պարգևում է—70
Քրիստոս՝ հաց և գինի—240
Քրիստոս ծառա եղավ, հավիտենականը՝ ժամանակավոր...—239
Քրիստոսի մահով ձեռք բերվող հաշտությունը—8, 47
Քրիստոսի մեկ բնությունը—15, 16
Քրիստոսին տեսնելը—9
Քրիստոսի քավչարար մահը—147, 190, 211, 219, 325

Օ

օրինակի ուժը—23